ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆԵՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Գարեհատառանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 րբլ. ոս. Թղթդրմ.

Ներքին ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, սմբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագրութիւն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի մի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. Հաշուեյարդարը 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PEHROUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ա ՏԱՐԻ ԹԻՒ 20

1894 ՀՈԿՏԵՄԲԵՐ 6

ՍԵՊՏԵՄԲԵՐ 24 (Հ. Տ.)

ԳԱՒԱՌ

Խմբագրատեղիին հ. աներթ. օրեր

ԳԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Գարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ոյժերի ցրուումը. — Կովկասեան ցամաքաձի. — Թրքական բռնութիւններ եւ Սասունցիների շարժումը. — Թրքական հեռագրատուրեր Վիեննայէն. — Քօլէրան Կ.պոլսի մէջ. — Անգլիա եւ Ֆրանսա. — Արտասահմանի լուրեր. — Աշխարհի մեծ քաղաքների բնակիչները. — Յանձնարարութիւններ։

ՈՅԺԵՐԻ ՑՐՈՒՈՒՄԸ

Դեռ հայ հայրենասէրների խիտ մեծագոյն մասին մէջ կը տիրէ այն համոզումը թէ ամեն անհատ կրնայ և պարտաւոր է հայրենիքի ազատութեան համար ինք ՈՒՂՂԱԿԻ աշխատիլ։ Այսպէս մէկը կը կարծէ թէ մի օգտակար գործ արեց ինքնագլուխ նպատակելով մի կամաւորի կամ հայրենասէր գործիչի, մի ուրիշ խմբակ ինքնին ղէնք գնելու և երկիրը ղրկելու վրայ կը մտածէ, երրորդ մը կկոչէ իր անձնական ոյժերով և համոզմամբ օտար մի թերթի մէջ մի քանի սիւն կը գնէ ի նպաստ հայ գաղթի և կը մտածէ որ մի պարտք կատարեց։

Սակայն այդ անհատների և խմբակներէն կոգէ եղած ուղղակի օգնութիւնները ոչ թէ միայն չատ օգուտ չեն տար հայրենիքին, այլ մինչեւ իսկ կրնան վնասակար դառնալ, ոյժերի անօգուտ սպառման պատճառով։

Ջոհելու և օգնելու ԱՆՈՒՂՂԱԿԻ ձեւը թէեւ ամենէն իրական օգուտ կուտայ, բայց դեռ 10 տարիէ ի վեր անդադար և այլ և այլ ձեւերով կըրկնուած այն միտքը թէ «անհատական ճիգերը ոչինչ կրնան ընել, պէտք է որ անհատները իրենց ոյժեր ընդհանուրի մէջ խառնեն» արմատ չէ բռնած հայ ժողովրդեան մէջ։

Այդ խնդրին ներկայիս մէջ ալ կենսական և ժամանակակից լինելուն համար, մենք այդ կէտի վրայ դարձեալ կը հրաւիրենք հայ հայրենասէրների ուշադրութիւնը, և ինչքան ալ անախորժ երեւի սկզբէն, մեր այս բանաձեւ կը դնենք թէ անհատներ և խմբակներ պարտաւոր են միայն կռուակցութեան համար աշխատելու. իսկ կռուակցութեան պարտաւորութիւնն և իրաւունքն է հայրենիքին համար աշխատել։

Թողունք այն կրկնուած և ճշմարիտ տեսութեան մասին խօսիլ թէ անհատ ջանքերը անապատի մէջ ցամքած աղբերակներ են և թէ անոնք մի լճի մէջ հաւաքուելով կրնան մի տեղ ուռոգել, հետեւեալ պարագային միայն նկատի առնենք թէ հայրենիքի ազատութեան համար գործելը այնքան ծանր և բազմակնճիռ մի խնդիր է որ ամեն մի անհատ չկրնար ո՛չ ժամանակ և ո՛չ խելք ունենալ՝ օգնելու և գործելու կերպը ինքնին որոշելու համար։ Յեղափոխական գործը կառավարելն աւելի դժուար է քան կազմակերպուած մի պետութիւն կառավարելը. յեղափոխական գործը աւելի փորձառու և կամքի տէր անձեր կը պահանջէ։

Մեր մէջ կազմուած հայրենասիրական մեծ խմբերի-կռուակցութիւնների կեդրոնները, որոնց մէջ գտնուող մարդիկ իրենց բան գործ միայն յեղափոխութեան համար աշխատելու պատրաստ են և ամեն կողմ գտնուող Հայերի հետ յարաբերութեան և լուրերի կեդրոնը կը գտնուին, տասնք ալ հազիւ թէ կարող են խարխափելով, փորձեր անելով՝ գործելու մի յարմար ճամբայ գտնել և դեռ տասնց տարբեր ծրագիրներին մէջ մին ուղիղ և միանները սխալ պիտի լինին. ո՛ւր մնայ որ հայ վաճառականը, արհեստաւորը, ուսուցիչը որոնք չաբաթը մէկ անգամ լրագիր կը կարդան կամ չեն կարդար, իրենց շրջանակէն դուրս ուրիշ տեղերի գործերը չգիտեն, տասնք եղեն այս կամ այն հայրենասիրական օգտակար գործ անելու յաւակնութիւն ունենան. չէ՞ որ իրենց անգիտութեան պատճառով իրենց զոհզոհութիւն անօգուտ կը լինի։

Յեղափոխական ձեռնարկները ամեն տեղ և ամեն ժամանակ միօրինակ օգտակար չեն։ Այս ինչ տեղ օգտակար է կամաւոր ղրկել, այն ինչ տեղ միւստակար. մէկ օր ստիպողական է դէնքի դրամ տալը, միւս օր կրնայ դեռ անօգուտ և յետադիմի նկատուիլ. մէկ տեղ չարժուիլ պէտք է անել, մի ուրիշ տեղ լուռ մնալ. տագտապային խումբեր կրնան մի ժամանակ օգտակար լինել, իսկ ուրիշ ժամանակ անզգայման միտակար. մէկ խօսքով, պարագաներուն հազարումէկ փոփոխութիւններ կան. Ուրեմն այդքան փոփոխութիւնների մէջէն գործին համար օգտակար մի ճամբայ դնելու համար անհրաժեշտ է որ մի մարդ թէ՛ յեղափոխ-մտանոգէտ լինի և թէ՛ միւս այդ գործին մէջ գտնուիլ. Ամեն անհատ այդ մտանոգիտութիւն չկրնար ձեռք բերել. հազիւ թէ կուսակցութիւնների կեդրոնին մէջ պէտք եղած միջոցներ կը գտնուին որոնք գործը ամեն կողմէ և օրն օրին ուսումնասիրելու գիւրութիւն տան. ուրեմն ի՛նչքան անհաչիւ գործ կը լինի որ ամեն անհատ ելնէ ինքն իր խելքով, ուղղակի ղէնքի դրամ տայ, կամաւորի, գործիչի նպատակ, խումբ կազմէ եւն., լսկ լսելով որ այդ տեսակ բաները պէտք կը լինին յեղափոխութեան։

Հայ հայրենասէրները, կը կըրկնենք, անօգուտ մի բան արած կը լինին եթէ չարունակեն իրենց զոհողութիւնները ՈՒՂՂԱԿԻ կերպով անել։ Եթէ կուզեն օգտակար զոհողութիւններ անել, պէտք է որ իրենք լսկ օգնեն իրենց ընտրած տեւէ կուսակցութեան գործանոցին. կուսակցութիւնը մը օգնելն ո՛չ մեծ խելք և ո՛չ մեծ հմտութիւն կուզէ, ամեն մարդ կրնայ իր հաւնած կուսակցութեան՝ գրչով, դրամով պարբերական մի օգնութիւն անել, նկատի ունենալով ամենէն առաջ կուսակցութիւնը զօրացնել. սա ուժոյնալով կրնայ ուղղակի մի ծառայութիւն մատուցանել երկրին, իր ձեռք ամփոփուած ոյժեր ունենալով և ժամանակն ու հանգամանքները լաւ կշռելու գիւրութիւնն ունենալով։

Մեր հայրենասէր անհատների նիւթական փոքր կարողութիւնով չատ չնչին մի քանակ ղէնք ձեռք կրնայ բերուիլ. իսկ այդ նիւթական փոքր ոյժերով զօրացած և ժողովրդականացած կուսակցութիւնը ի հարկին 100,000ներ կրնայ հաւաքել ժողովրդէն և զայն իր ուզած կողմն առաջնորդել։

Իսկ եթէ մենք հեռանանք, խրբտչինք կուսակցութիւն զօրացնելու միտքէն, արհամարհենք արդէն եւ ղաժնների ամենքն ալ, ուրիշ բան ստրած չենք լինիր, եթէ ոչ անթիւ անհատ — կուսակցութիւնների ծնունդ տալ որոնք պիտի սպառեն չորցունեն ազգին մէջ եղած ոյժերը և Հային իրբ ազգութեան ժահուան վճիռը պիտի փութացունեն։

Մ. Ա.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

(Շար. 19րդ բաժ.)

Թ

Կասեն թէ Հայրիկի օրով բազմաթիւ ոգեհաներ քահանայ կը ձեռնադրուին։ Այդ խնդիրը պատճառական լուսաբանութեամբ արդէն լրագրութեան մէջ։ Եւ մենք այդ մասին կաշխատինք կարելի եղածին չափ համառօտ խօսիլ։

Այդ տարաձայնութիւնների առաջքն առնելու համար, վեհ. կաթուղիկոսը այս տարուայ Մարտարի մարտի համարին մէջ հրատարակել տուաւ Արշէն երէցի քարոզը, որով կուղէր քահանայական հարցի վերաքերութեամբ իր հայեացքները պարզել մատ առ մատ։ Արշէն երէցի քարոզը նշանաբան եղաւ պժգոներին հրապարակ գալու համար։ Ամենէն առաջ Սեդրակեանը գրիչ առաւ և իր «Ո՞վ հաւատաց» յօդուածով հռչակեց իրեն ո՛րչափ հասկացողութիւն և գատողութիւն ունենալը Սեդրակեանին հետեւցան մշակականները։ Ա՛լ ինչեր ասես չգրեցին և չարեցին։ Եթէ ուրիշ պատճառներ չունենային, միթէ՞ կարելի էր հաւատալ որ Արշէն երէցի քարոզին սխալ մեկնութիւն տալով այդքան ալ անպատկառ կերպով վերաբերուէին դէպի Հայոց Հայրիկը։ Ամենահասարակ մտածողն անգամ կարող էր հասկանալ թէ «Մշակ»ի մէջ Սեդրակեանի «Ո՞վ հաւատաց»ին համակրութեամբ գրուած յօդուածներն եւ այս ու այն կողմէ մի քանի տաք գլուխների չնորհաւորական հեռագիրները՝ ուղղակի Հայրիկի դէմ պատրաստուած մի ցոյց էին։

Կարմրել գիտցող մարդը պէտք է ամչնայ մինչեւ անգամ մտքէ անցնել այդ առիթեան պատգամախութիւն։ Ակռէ մի քանի տարի առաջ, երբ քիչ թէ չատ գրիչ չարժել գիտցող մշակականների ամենքն ալ Հայրիկին երկինք բարձրացնելու համար ինչե՛ր դրելին չէին գիտեր, ահաւասիկ այժմ իրենց գրիչները Հայրիկի դէմ սրելով՝ անարգական խօսքեր ուղղել անոր հասցէին, միեւնոյն ժամանակ չնորհաւորելով Սեդրակեանին։ — Ա՛յ եղբայր, ի՛նչ կայ, ի՛նչ եղաւ ձեզ, ինչո՞ւ այդպէս քիչ ժամանակի մէջ եւ լաք վնուեցաք մի մարդի դէմ որկէս

ՅՈՎՍԵՓՈՂ ՎԱՂՎՑՎՍՈՈՎ ՎՈ ՎԱՂՂՎՎՓՎՍՂՎԱ ՂՈԿՈՒԱԺՓ

ՔՈՎՍՅՈՆՈԿՈՆ
(Վնդիոպչռամ2)

Ղե ռոարՏՂռ

Ղիիռամամ վռզղչվբիռեժոիռոռբ ո վռզղչվբիռամռռոիկոռոռ ձռռռ «Ռռզղռռռամոռռռ Ղռռռռռռ» ռռռռռռռռռռ ռռռռռռռռռռ ռռռռռռռռռռ

դեպի Մշու սահմանը և որպէս մի անխորտակելի պարիսպ կընտրեն և կը համախմբուին Անտօք (Անտօն և Մարթի ճգնատեղին) լեռան սկաւառակէ բարձրահայեաց լանջի վրայ, և անոնք, վառեալ երկնային սիրով կըսպասեն օրհասական մեծ ժամին։

Պատերազմն անխուսափելի և կռիւն արդէն ահեղ։

Հայերի դիմադրութիւնն այն ատիճանին անձնավստահ և ահաբեկ կը լինի, որ կառավարութիւնը իւր ակնյայտնի պարտութիւնը նկատի ունենալով, փութդ աշիրաթներու թիւը զանազան մեծամեծ խոստումներով ածելի ու աւելի կը ստուարացնէ. սակայն դարձեալ անօգուտ, դարձեալ ապարդիւն. նոքա անյողդողդ են։ Թո՛ղ սպրանց, օգոստոսի 9ին Բաղէշից 300 զօրք և երկու լեռնային թընդանօթ եւս ուղարկուեց։ Նոյնպէս օգոստոս 20ին կէնճից օգնութեան եկան թուով մօտաւորապէս 350 զօրք և մէնդանօթ։ Այս բոլորից յետոյ դարձեալ զօրաց հրամանատարները տեսնելովիրանց զօրաց սաստիկ կարդն և բոպէ առ բոպէ դասալիքների ստուարացած թիւը, այլեւս յետս կընկրկին ազնուութեամբ ճակատամարտելուց։ Այդտեղ, այդ պահուն մարդկային բանականութեանը կը փոխարինեն օձային խորագիտութիւնը և ազուէսային խորամանկութիւնը։ Կառավարութիւնը հաշտութեան փող հնչեցընել կսկսայ և դրօշակ պարզել։ Հայերը, այդ լեռնային պարզ, միամիտ, դիւրահաւան և անուսում, համակրելի ժողովուրդը՝ այդ առաջարկութիւնը ճշմարտութեան հալած իւղի տեղ կընդունի, մանաւանդ անճրկացած նիւթական անկրելի դրութիւնից խլկոյն ևեթ զինադադար կը լինի և բարեկամ ութեան ձեռք կը պարզէ ղուրանի ուխտադրուժ երկրպագուներին։ Կառավարութիւնը օգտուելով այդ իւր ի գործ դրած ժամերի հանգամանքից՝ բոլորովին յարմար և միամտացրած վայրկենին պատերազմի նշան կսկսայ իւր խաժամուժ բաշիբոզուք զօրականներին. և ահա անմիջապէս մարմնեղէն օդակով կը պարփակուին այդ այժմ անզէն և միամիտ մի բուռն ժողովուրդը և կը թաղուին տեղատարափ հրաշէկ գնդակների, սուրերի և սուի ների ներքոյ, «որպէս զօրով առնչի կարչի»։ Այստեղ, այս ողբալի տեսարանի նկարագրութեան առիթիւ այլ եւս անզօր է գրչին թեկադրող արտի ու մտքի այժն ու երեւակայութեան լռակեաց յառաջընթացութիւնը։ Պէտք է մեռայն ահեղ լեռ ո՛րպիսի ալիոզոմ, աղիք գալարող ճիչերով, հառաչներով սրտխողխող կը լինէին, դիակներ երկիր կը գլորին, առանց խտրութեան սեռի և հասակի, այն ողբալու և համակրութեան արժանի ժողովուրդը, որ իւր քաջարի ոգւոյ ընդունակութեամբ Հայաստանի ներկայ գարուս վառք ու պարծանքի բոլորապակ կը կազմէին։ Թո՛ղ այդ ամարդի միջոցով անխնայ կոտորուէը, նորանց արիւնի ծայրերին՝ որպէս յաղթանակի դրօշակ՝ իբարձուած կը փողփողեն անմեղ մանկանց մարմնոց դիակներ, դեռահաս օրիորդների ամօթապատ անդամի մասնիկները, ոտաշորերը, և վերջապէս այն ամենը, ինչ որ անբնական կը թուի, ինչ որ տմարդի էր։ Աւելացնենք և սորա վրայ չարժական ու անչարժ այն աւարառութիւնները, որ մօտաւորապէս մի քանի ժամուայ ընթացքի մէջ՝ իւր կառավարիչ բազուկներով վիասին՝ չնչաւեցիս ու հողին հաւասարուեցան...։

Վայրենի ամբոխը՝ խրախուսուելով իւր այդ լկտի արարմունքներից և սխրագործութիւններից, այս անգամ կ՚առաջացնի իւր աւերիչ քայլերը դէպի Սասնոյ կուրծքը — Տալուորիկ գիւղը — ուր իրանց անկախութեան սիրաւառ տենչօք հաւաքուած է եղեր գաւառի միւս ծագած հայազգաբնակութիւնը և ղէն ի ձեռին կռիւ մղելու իրանից քառապատիկ մեծութեամբ գինուած դարանակալների ու բռնաւորների դէմ։

Արդէն թշնամու նորահաս անթիւ օգնական գինուորների քիւրդ աշիրաթների կողմից՝ տասնեակ հնդանօթներով բռնուած է Տալուորիկը, հարաւէն Անտօք ու Ս. Յակոբ լերանց անցուդինները՝ Մուշից հասած զօրքերով, հիւսիսային կողմից Տաւրոսի կիրճերը՝ Զիլանցի աշիրաթից, Արեւելեան կողմից՝ Ջուխտակ Ս. Մարթուկի և Ծովասարի (լիճ) թեւերը, Տիգրանակերտի ոլորապտոյտ գաւիվայրները՝ — խուլպեցի աշիրաթից. իսկ արեւմտեան կողմից՝ 40ականի Սպիտակ Սարի (Տալուորկի վերեւ) Ֆըռֆըռ քարի անցքերը՝ կինճ գաւառից վերահասող զօրքից։

Սասնոյ սիրտն ու հոգին Տալուորիկը պաշարուած է այժմ... պաշարուած է, այո՛, Տալուորիկն և լեգէոնական զօրքերից, և խաժամուժ ամբոխից, և քաղցից... իսկ սորա մանրամասնութիւնը՝ միւս անգամ։

ՌԻՀՎԻ ՔՈՒՒԻ

ԹՐՔԱԿԱՆ ՀԵՌԱԴՐԱԼՈՒՐԵՐ
ՎԻԵՆՆԱՅԷՆ

Վիեննայէն հոկտ. 2ին հեռագրած են ֆրանսական լրագիրներին հետեւեալները։

«Ապատամբած հայերի խումբերը բնակիչ եղան Բաղէշի նահանգին մէջ (գուցէ Սասունին կախարկէ որ Բաղէշի նահանգին մէջ է). ժողովուրդը հաւատարիմ մնացած է և չնորհակալութիւն յայտնեց կառավարչին։

«Մերտասիսի, Մարզուանի և Ամասիոյ մէջ ձերբակալուած 300 հայեր դատաստանի ենթարկուեցան։

«Կ.պոլսէն կիմացուին որ Պեռական խորհրդի անդամ Թէվֆիք Էպուբիա որ միւոպալոսի արտօնատէրը է, ձերբակալուեցաւ։ Ալրտասահմանի հետ իր վտանգաւոր թղթակցութիւններ ձեռք անցած են։»

ԲՕԼԷՐԱՆ Կ.ՊՕԼՍԻ ՄԷՋ

Ամէնքէն արժանահաւատ աղբիւրէ հեռագրուած է Մարսէյլ հոկտ. 3ին թէ Կ.պոլսի մէջ քօլերա կայ և շատեր կը մեռնին այդ հիւանդութենէ։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Անգլիոյ նախարարապետ Լորտ Ռոզպէրի հինգշաբթի օր նիստ անելու հրաւիրեց յանկարծ նախարարները։ Երբ Խորհրդարանը իր նիստեր դադրեցուցած է և նախարարներն արձակուրդով գնացած են ապատ օդ չնչելու, այսպէս յանկարծակի իրենց խորհրդակցութեան հրաւիրուիլը զանազան մեկնութիւնների առիթ դարձաւ։ Սակարաններին (bourse) մէջ մի տեսակ իրարանցում տիրեց և կարծուեցաւ որ Անգլիոյ և Ֆրանսայի միջև ծանր խնդիր ծագած է, Հովանները պատժելու համար Ֆրանսայի կողմէն Մատակասքարի վրայ լինելիք արշաւանքին պատճառով։

Հինգշաբթի օր նախարարների խորհուրդն եղաւ և թէեւ խորհրդակցութեան արդիւնքն պաշտօնապէս ծանուցուած չէ, բայց իմացուած է որ Մատակասքարի խնդիրը չէ եղած նախարարական խորհրդին այդպէս յանկարծակի գումարուելուն պատճառը, այլ Մայրագոյն Արեւելքի գործերը։ Անգլիա չուզեր թոյլատրել որ ձափոնցիները գերիշխան ազդեցութիւն ունենան Փօրէալի մէջ. իսկ Զինաստանի մայրաքաղաքին, Բէքինի մէջ ալ, ժողովուրդը գրգռուած լինելով օտարականներին դէմ, հարկ համարուած է պաշտպանել անգլիական դեսպանատունը անգլիացի զօրքերով։ Ուստի Անգլիա պիտի փութայ իր զրահաւոր պատերազմանաւեր ղրկել Զինական ջուրերը։

Ֆրանսական նախարարութիւնն ալ հրաման ղրկեց Պրէսթի ծովային նահանգապետութեան որ իր պատերազմանաւեր պատրաստ վիճակի մէջ դնէ Զինական ծովերն երթալու համար։

Լոնտոնի Ֆրանսական դեսպան Պր. Տէքրէ հրաժարած լինելով, անոր տեղ նշանակուեցաւ Պարոն տը Քուրսէլ որ աւելի ազդեցիկ մէկը լինելու համբաւն ունի։

ԱՐՏԱՍՈՎԱՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Լուր կայ թէ մինչեւ Զարի առողջանալը, իրեն տեզակալութիւնը պիտի վարէ Զարեւիչը (գահաժառանգ իշխան)։

— Ռուսիոյն կը հեռագրեն որ Քիւէվի պատերազմական ատեանը 38 անձ դատապարտած է տէրութեան դէմ դաւաճանութեան յանցանքով։ Ատոնք վարշաւայի ամրոցների յատակագիծը և ուրիշ զօրքերի շարժումներէ մի ծրագիրը գողցած էին, Աւստրիական կառավարութեան ծախելու համար։ 1892էն ի վեր բանտարկուած և դատաստանի ենթարկուած էին։ Գլխաւոր յանցաւորը, Բուրիանօվսքի, սպայակոյտի նախկին սպայներէ մին, ցկեանս Սիպերիոյ մէջ չղմայակապ աշխատութեան դատապարտուած է. 26 հոգի ալ նոյն աշխատութեան դատապարտուած են զանազան ժամանակամիջոցներով, 2էն մինչեւ 20 տարի։

— Պուտա-Բէշթէն կիմացուին թէ Պարոն Գարահորկէվիչ իշխանը Սերպիոյ գահին վրայ իր ունեցած ենթադրական իրաւունքներ ծախած է իր եղբօր Արսէն իշխանին 500,000 ռուբլիի փոխարէն։

— Աւստրիական պատուիրակութեան հոկտ. 3ի նստին մէջ Պր. Քալնօքի բացարձակապէս յայտարարեց որ Սերպիոյ հետ պատերազմական մի դաշնադրութիւն կազմուած լինելն լուրը սուտ է։

— Սուէզի ջրանցի յատակը մաքրող գործաւորները, Բօր. Սայիտէն սկսած մինչեւ Իսմայիլիա, գրեթէ ամենքն ալ գործադուլ արած են որով ջրանցի ընկերութիւնը ծանր դրութեան մը մէջ կը գտնուի այժմ։

ԱՇԽԱՐՀԻ ՄԵՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐը

Հետաքրքրական է աչքի առջեւ ունենալ աշխարհի գլխաւոր քաղաքներին այս րոպէիս ունեցած բնակիչների թիւը որ հրատարակուած կը տեսնենք Ֆրանսական լրագիրներուն մէջ։ Այն մայրաքաղաքներ որոնք 100,000էն պակաս բնակիչ ունին, ինչպէս Սերպիոյ մայրաքաղաքը Պէլկրատ (36,000), Պուկարեշի մայրաքաղաքը Սոֆիա (31,000) և այլն չենք յիշուած այստեղ։

Ֆրանսա. — Փարիզ, 2,447,000 բնակիչ. Լիոն և Մարսէյլ, ամեն մէկը 400,000էն աւելի բնակիչ. Պորտօ և Լիլ, ամէն մէկը 200,000էն աւելի, Հավրը 100,000էն աւելի։ Գաղթականութիւններէն Թունուզ 100,000էն աւելի։

Ամերիկա. — Պէրլին 1,579,000 բնակիչ. Լայպցիկ. Միւնիխ, Համպուրկ, ամեն մէկը 400,000էն աւելի բնակիչ։

Ամերիկայի Միացեալ-Նահանգներ. — Վաշինկթըն 230,000 բնակիչ. Նիւ Եորք 1,515,000. Շիքագօ և Ֆիլատէլֆիա, ամեն մէկը 1 միլիոնէն աւելի. Պրուքլին 800,000, Պոսթըն 418,000։

Անգլիա. — Լոնտոն 4,211,000 բնակիչ. Կաստօու 600,000. Լիվըրբուլ, Մանչէսթըր, ամեն մէկը 500,000։ Գաղթականութիւններէն Պոմպէյ և Կալկութա 800,000ական բնակիչ. Մէլպուրն 300,000։

Աւստրօ-Հունգարիա. — Վիէննա, 1,364,000 բնակիչ. Պուտա Բէշթ 500,000էն աւելի. Փրէսպուրկ 100,000էն աւելի։

Եգիպտոս. — Գահիրէ, 375,000 բնակիչ. Ալէքսանդրիա, 230,000։

Թիւրքիա. — Կ.պոլիս 874,000 բնակիչ. Զմիւռն 200,000. Անդրիանուպոլիս 130,000։

Իտալիա. — Հռոմ 440,000 բնակիչ. Նափոլի 500,000. Միլան 400,000. Թուրինօ 300,000. Բալէրմօ, Ջէնովա, ամեն մէկը 200,000. Վենետիկ 100,000։

Հոլանտա. — Լա Հէյ 160,000. Ամսթէրտամ 400,000։

Ճափոն. — Թօքիօ, 1,552,000։

Յունաստան. — Աթէնք 107,000։

Շուէտ. — Սթոքհոլմ 250,000։

Ուրուկուա. — Մոնթէվիտէօ 175,000։

Չիլեաստան. — Բէքին և Թաենթօն, ամեն մէկը 1,650,000. Թիէն-Ձին, Հանքէու և Ֆու-Ձէու, ամեն մէկը 500,000. Շանկայ 300,000։

Պարսկաստան. — Թէհրան 200,000 Թաւրիժ 170,000։

Պելճիքա. — Պրիւքսէլ, 471,000. Անվէրս, 200,000էն աւելի։

Պրազիլիա. — Ռիօ-տը Ճանէրօ 510,000։

Ռեբիւպլիք Արժանթին. — Պուէնոս Այրէս, 544,000։

Ռումանիա. — Պուքրէշ 221,000։

Ռուսիա. — Պետերբուրգ, 929,000. Մոսկուա, 700,000էն աւելի. Վարշաւա, 400,000. Օդէսա, 200,000։

Սպանիա. — Մատրիտ, 470,000. Պարչէլոնա, 300,000։

Տանիմարքա. — Քօբէնհագ, 375,000։

Փորթուգալ. — Լիսաբոն, 265,000։

ՆԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 Թուականի Հայ տղին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միաձալ դիւրքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմեար, տպուած 70 × 45 սանտիմեար քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէջ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները իրենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 բրլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախով միասին։

Պարսկաստանի համար 1 բրլ. ռսկն. կամ 2 ֆր. եւ 50 սանտ.

Սոյն առիթս կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէնբերեանի Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հար. Ա. 1794. 1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գինն՝ ճանապարհածախով՝ բրլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վիրգրեալ պատկերն ու դիրքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիայի խմբագրութեան։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

Ֆ ԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄՆԱՑԱԿԱՆ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յայողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականների գործունէութեանը մասին։ Սկիզբը դրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեանն առթով։

Հեղինակը չատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ նթէ ընթերցողների հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի գիւղացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը լինի։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։)

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը։

Գրաժեքը կանխիկ վճարուած՝ գիրք ղրկելիք։

Բ. Ց. Վարդուկեանց. ԴԱՁԼԱՁԼԻԿ Գրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և դրաթար լեզուով գրուած ոտանաւորներ են Ազատուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ։

ՀԱՑՈՑ ՀԱՑՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հաժառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամին 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկի գիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ են ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիայի ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկթագրի (գլխագիր) համար 2 սանտիմ և 1 բոլորգրի համար 1 սանտիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ ժամանակ գէշ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փոսկագծի մէջ նշանակուած գիներով։

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՁՆՈՒԻՒ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՄՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ՀՆՆՕՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՓՕՏԱՄԱՓՆԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։*) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՒՈՐ ՔԱՔԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹՆՐՑԱՐԱՆ յետ այբուբենաձեւ ուսարտեւանաց (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ. Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերի բնակիչներու թիւին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա. տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փոթթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ցուցարարի մէջ որ ութ ամսով դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկերը կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՒՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկերը կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան գաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններէ տակ իւրաքանչիւրին գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չ՚լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրարու նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլսոյ տպագրուած պզտիկ երգարաններէն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւններու տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ Ա ԻՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով սրչա՛փ չարիքներու պատճառ. դարձած է և վերջ է վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.